

ՀՀ Արդարադատության նախարության քրեակատարողական  
իիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն  
իրականացնող հասարակական դիտորդների խմբի  
2007 թ. գործունեության մասին

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան 2008թ.

Հաշվետվության հեղինակներ՝

Միքայել Բաղդասարյան

Ավետիք Իշխանյան

Արման Դանիելյան

Արթուր Սաքունց

Էդմոն Մարության

Թեմիկ Խալափյան

Միքայել Արամյան

## Ներածություն

Առաջին անգամ ՀՀ Արդարադատության նախարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խնբի (այսուհետ՝ 'Դիտորդական խումբ') հաշվետվությունը ներկայացվում է նախկինում ներկայացված հաշվետվություններում տեղ գտած և մինչ օրս չլուծված խնդիրների համադրությամբ:

## Իրավիճակն ըստ քրեակատարողական հիմնարկների

### «Գորիս» քրեակատարողական հիմնարկ

2005 թվականի հաշվետվությամբ նշվել է, որ հիմնարկի խցերը չեն համապատասխանում պահանջվող չափանիշներին և կարիք ունեն կապիտալ վերանորոգման, անբավարար է ջրամատակարումը, բավարար չեն տեսակցության սենյակները, անբավարար են բացօթյա զբոսանքի տրամադրման և այլ զբաղմունքների մեջ կալանավորվածներին ներգրավելու պայմանները, դժգոհություններ կան անձնակազմի վերաբերմունքից, արգելվներ են ստեղծվում դատապարտյալների կողմից հրավիրած բժշկի հետ բուժման կամ ստուգման նպատակով տեսակցելու հարցերում:

2006 թվականի հաշվետվությամբ արձանագրվել է, որ 2006 թվականի ընթացքում զգալի աշխատանքներ կատարվել են նախկինում արձանագրված բերությունները վերացնելու ուղղությամբ՝ խցերի մեջ մասը վերանորոգված են, որի արդյունքում վերանորոգված խցերում զուգարանները մեկուսացված են, ապահովված է բնական լուսավորությունը ցերեկային ժամերին, վերանորոգված է կոյուղու համակարգը, հիմնանորոգված է կաթսայատունը և խցերը ստանում են բավարար ջեռուցում: Հիմնարկում նկատելիորեն բարելավվել է բարոյահոգեբանական մթնոլորտը և անձնակազմի վերաբերմունքի դժգոհություններ չկան:

Դրան զուգահեռ, արձանագրվել է, որ դեռևս կան չվերանորոգված խցեր, որոնցում վիճակը հեռու է բավարար լինելուց, մի շարք խցերի էլեկտրամատակարումը կատարվում է ոչ թե անընդմեջ, այլ ժամանակացույցով, իսկ պատժախցերի մակերեսները շարունակում է մնալ 4,5 քմ՝ 6 քմ-ի փոխարեն: Դացադուլ հայտարարած անձանց պատժախցում պահելու պրակտիկան շարունակվում է:

2007թ. այցելությունների ընթացքում արձանագրվել է, որ հիմնարկը, ըստ լրակազմերի՝ այսինքն ծանրաբեռնվածության, համապատասխանում է Արդարադատության նախարարի 14.10.05թ. թիվ ՔԴ-61-Ն հրամանով հաստատված չափորոշիչներին, սակայն 2007թ. դեկտեմբերի 7-ին կատարված այցի ժամանակ հիմնարկությունում պահվող կալանավորված և դատապարտված անձանց ընդհանուր թիվը եղել է մեկով ավելի՝ կալանավորվածներ եղել է 19 մարդ, դատապարտվածներ՝ 143 մարդ, մինչդեռ հիմնարկը նախատեսված է ընդհանուր թիվը նախատեսված է 119 մարդ, մինչդեռ առկա է եղել 143 մարդ, որը նախատեսվածից ավել է 24 մարդով:

Բացի դա, եթե առկա դատապարտյալների ընդհանուր քանակն ավել է 19 մարդով, ապա փակ ուղղիչ հիմնարկ պատժատեսակ կրող անձանց քանակն ավել է 61 մարդով, այսինքն կրկնակի անգամ, քանի որ 143 դատապարտյալից միայն 11 մարդ է կիսաբաց ուղղիչ հիմնարկի ռեժիմով, իսկ 132-ը՝ փակ ուղղիչ հիմնարկի ռեժիմով պատժատեսակ կրող անձիք են: Այդպիսի դատապարտյալների թույլատրելի քանակն այս հիմնարկության համար նախատեսված է 61 մարդ:

Արձանագրվել է նաև, որ հիմնարկությունը, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմանը շնորհիվ ջրագծերի վերականգնման ուղղությամբ իրականացված աշխատանքների, լիովին վերականգնված է ջեռուցման համակարգը, իսկ այս հիմնականում վերանորոգված և համապատասխանեցված են օրենքով նախատեսված պայմաններին՝ զուգարանի մեկուսացում, սանիտարական պայմանների ապահովում, բնական և արհեստական լուսավորություն, մեկ անձի համար նվազագույնը 4 քմ. բնակելի տարածության ապահովում, բուժ սպասարկման որակից դժգոհություններ չկախն:

Դրան զուգահեռ, արձանագրվել է, որ դեռևս կան չվերանորոգված խցեր, որոնցում անբավարար է բնական լուսավորությունը, զուգարանը չի մեկուսացված, նաև չի ապահովված մեկ անձի համար նվազագույն բնակելի տարածք:

2007թվականին կրկին արձանագրվել է, որ հացադուլավորների պահման համար առանձին սենյակ չի նախատեսված, այդպիսիներին շարունակում են պահել պատժախցում:

Արձանագրվել է նաև, որ հիմնարկի շինության վերականգնման համար կատարվող ներդրումները քիչ արդյունավետ են, քանի որ այն կարիք ունի հիմնովին վերափոխման:

2007 թվականի ընթացքում այստեղ պահվող կալանավորված կամ դատապարտված անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի վերաբերյալ ահազանգեր չեն ստացվել:

#### Առաջարկվում է՝

1. Շինուարկում պահվող դատապարտյալների ինչպես ընդհանուր թիվը, այնպես էլ դրանց թիվն ըստ ռեժիմների համապատասխանեցնել Արդարադատության նախարարի հրամանով սահմանված չափորոշիչներին,
2. շարունակել խցերի վերանորոգման աշխատանքները և բոլոր խցերը համապատասխանեցնել պահանջվող չափորոշիչներին,
3. նախատեսել հացադուլ հայտարարած կալանավորված, դատապարտված անձանց պահման համար հատուկ սենյակ,
4. հեռանկարում նախատեսել տվյալ հիմնարկությունն այլ շինություն տեղափոխելու հնարավորությունը:

### «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ

Դիտորդական խումբը 2005-2006 թվականներին «Արթիկ» քԿՀ-ի մասնաշենքի վերանորոգման պատճառով այցելություններ չի կատարել:

2007 թվականի սեպտեմբերին խմբի անդամները «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում հանդիպում են ունեցել «Արթիկ» քրեակատարողական հիմնարկից տեղափոխված դատապարտյալի հետ: Դատապարտյալը խմբի անդամներին գանգատվել է, որ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում զանգվածաբար խախտվում են այդտեղ պահվող կալանավորվածների և դատապարտվածների իրավունքները, որ առկա է հովանավորչության և կաշառակերության դեպքեր, անազատության պայմաններում պահվող անձանց նկատմամբ դաժան և անմարդկային վերաբերմունքը՝ զանգվածաբար կիրառվում է ծեծը և

խոշտանգումները, վարչակազմի դեմ տրվող բողոքները չեն ուղարկվում հասցեատերերին, այև նման բողոք ուղարկող դատապարտյալը Ենթարկվում է ծեծի և խոշտանգումների: Դատապարտյալը նշել է նաև անուններ՝ հիմնարկի նախկին պետի, պետի ներկայիս տեղակալի և այլ ծառայողների:

27.09.07թ. խմբի անդամներն այցելել և դիտարկումներ են կատարել «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում տիրող իրավիճակը պարզելու նպատակով, ինչպես նաև հարցումներ են կատարվել դատապարտյալներից:

Ըստ անցկացված ուսումնասիրության տվյալների, այցելության պահին հիմնարկում պահվելիս են եղել կալանավորված և դատապարտված ընդամենը 293 մարդ՝ թույլատրելի 338 մարդու փոխարեն:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հիմնարկի խցերին տրվող խմելու ջուրը ավագախառն է և պիտանի չէ խմելու համար, ջեռուցման կենտրոնացված համակարգը չի գործում հիմնարկի բացման օրվանից, հիմնարկը չունի բացողյա զբոսանքի հրապարակ, փորձ է արվում այն կառուցել հիմնարկի հնարավորություններով, հիմնարկը չունի բժիշկ: Այցելության պահին քԿՀ-ում աշխատում էր քրեակատարողական ծառայության վարչությունից ժամանակավոր գործուղված բժիշկը, ինչը միայն խնդրի ժամանակավոր լուծում է, գանգատներ են ստացվել նաև, որ սպիտակեղենն ամիսներով չի փոխում, իսկ քարտաֆոնային հեռախոսները տեղադրվել էին միայն խմբի անդամների այցելության նախօրեին:

Դատապարտյալները, որոնց հետ հանդիպել են խմբի անդամները, հաստատել են, որ հիմնարկի նախկին ղեկավարության օրոք՝ հիմնարկի պետի տեղակալի գլխավորությամբ և անմիջական մասնակցությամբ, դատապարտյալների նկատմամբ սիստեմատիկաբար իրականացվել են բռնություններ, ծեծ, խոշտանգումներ, դրսնորվել է դաժան և արժանապատվություննը նվաստացնող աննարդկային վերաբերմունք: Դատապարտյալներից մեկը պատմել է, որ 2007թ. մարտ ամսին, նպատակ ունենալով պատկան մարմիններին տեղեկացնել հիմնարկում տեղի ունեցող իրավախախումների և չարաշահումների մասին, իր խցում փակվել և հրաժարվել է դուրս գալուց, պահանջել է հանդիպում Մարդու իրավունքների պաշտպանի հետ: Իր պահանջը չի կատարվել, իսկ դրա փոխարեն հիմնարկի պետի տեղակալը և նրա ուղեկիցները կոտրել են խցի դուռը և մտել ներս: Բռնություններից խուսափելու նպատակով, ինքը վնասել է իր պարանոցը: Բժիշկ իրավիրելու և բուժօգնություն ցուցաբերելու փոխարեն, իրեն դաժանորեն ծեծել և տեղափոխել են պատժախուց:

Դատապարտյալները հայտնել են նաև, որ լայնորեն կիրառվել է դրամաշորթությունը՝ երկարատև տեսակցության համար պահանջել են 20.000 դրամ, կարճատև տեսակցության համար՝ 5.000 դրամ, բջջային հեռախոսից օգտվելու համար՝ 50.000 դրամ: Այս ամենը դարձյալ դատապարտյալները վերագրում են հիմնարկի պետի տեղակալին:

Դիտորդների կողմից արձանագրվել է նաև, որ 2007թ. հուլիս ամսից հիմնարկի նախկին պետը ազատված է պաշտոնից հիմնարկում տեղ գտած խախտումների համար, իսկ 11 ծառայող ստացել են կարգապահական տույժեր: Նախկին պետի տեղակալը, որը դատապարտյալների կողմից հոլովկում է որպես իրականացված բռնությունների, ծեծի, խոշտանգումների կազմակերպիչ, նաև մեղադրվում է դատապարտյալներից, կալանավորվածներից գումարներ շորթելու մեջ, որը Դիտորդական խմբի կողմից հրատապ հաշվետվություն ուղարկելու ժամանակ շարունակում էր պաշտոնավարել որպես հիմնարկի պետի տեղակալ, ինչը հարցված դատապարտյալները համարում են անարդարացի:

Հիմնարկի նոր պետի նկատմամբ նման բողոքներ չեն ստացվել:

Խումբը հույս է հայտնում, որ հիմնարկի նոր ղեկավարությունը կվերացնի նախկինում տեղ գտած խախտումները, իսկ մեղավորները կպատժվեն սահմանված կարգով: Հայտնաբերված

Խախտումները վերացնելու և հիմնարկին օժանդակելու նպատակով նախատեսվում է 2008 թվականին հաճախակի դարձնել խմբի անդամների այցելությունները տվյալ հիմնարկ:

**«Արթիկ» ՔԿԴ-ի վերընշված խախտումների կապակցությամբ Դիտորդական խմբի կողմից պատրաստվել և ՀՀ արդարադատության նախարարին է ուղարկվել հրատապ հաշվետվություն, որին մինչ օրս պատասխան չի տրվել: Դամաձայն Դիտորդական խմբի գործունեության կարգի՝ հրատապ հաշվետվության կապակցությամբ մեկնարանությունները տրվում են երեք օրվա ընթացքում:**

Առաջարկվում է՝

1. Վերանայել հիմնարկի պետի տեղակալին տվյալ պաշտոնում թողնելու նպատակահարմարության հարցը,
2. հիմնարկում պարբերական դարձնել տեսչական ստուգումները՝ կալանավորված, դատապարտված անձանց դիմում-քողոքներն օրենքով սահմանված կարգով ըստ հասցեատերերի ուղարկումն ապահովելու, բռնությունների դեպքերը բացառելու, անձնակազմի վարքագիծը պատշաճ մակարդակի բարձրացնելու և նման այլ բացասական երևույթները վերացնելու նպատակով,
3. միջոցներ ծերնարկել խմելու ջրի որակը բարելավելու ուղղությամբ,
4. ապահովել ջեռուցման կենտրոնական համակարգի շահագործումը,
5. հիմնարկն ապահովել բժշկով,
6. պատասխանել հրատապ հաշվետվությանը:

## **«Սևան» Քրեակատարողական հիմնարկ**

«Սևան» ՔԿԴ-ում հիմնականում պահվում են փակ և կիսափակ ռեժիմներով պատիժ կրող դատապարտյալներ:

Ընդհանուր առմանք դատապարտյալների պահման պայմանները բավարարում են օրենքով ներկայացվող պահանջներին՝ խցերը և հանրակացարանները վերանորոգված են, ապահովված է բնական լուսավորվածությունը, սննդի, բուժսպասարկման, անձնակազմի վերաբերմունքի վերաբերյալ գանգատներ չեն ստացվել:

Որպես լուծում պահանջող խնդիր, արձանագրվել է, որ ջրագծերը պատշաճ մեկուսացում չունենալու պատճառով, գերոից ցածր ջերմաստիճանի դեպքում սառչում են, խափանվում է ջրամատակարումը:

Դատապարտյալները չունեն սպորտաձևերով զբաղվելու հնարավորություն՝ բացակայում են սպորտային պարագաները:

Դատապարտյալներին աշխատանքով ապահովելու խնդիրն այստեղ նույնպես մնում է չլուծված:

Չուզարանները խցանումների պատճառով գտնվում են հակասանիտարական վիճակում, որի վերաբերյալ դատապարտյալները գանգատվել են, որ հնարավոր չէ օգտվել նման վիճակում գտնվող զուգարաններից:

## **«Կոշ» քրեակատարողական հիմնարկ**

Դատապարտյալների թվաքանակով «Կոշ» քրեակատարողական հիմնարկը 2-րդն է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից հետո: Այն նախատեսված է 640 դատապարտյալի համար: 2007թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ կիսաբաց հիմնարկի ռեժիմով պահպում էր 529 դատապարտյալ:

Դատապարտյալների կացարանները հիմնականում հանրակացարանային տիպի են՝ յուրաքանչյուր հանրակացարանում 80 մահճակալով:

Հանրակացարանները վերանորոգված են, բնական լուսավորությունը բավարար, բնակելի տարածքներն ըստ մարդկանց քանակի համապատասխանում են օրենքով պահանջվող նորմաներին:

Ըստ եղած գրառումների, երկու դատապարտյալ պատժախուց են տեղափոխվել 10 օր ժամանակով՝ անվտանգության նկատառումներով: Անհասկանալի է, թե ինչպիսի վտանգը կանխելու նպատակով է նման տույժ կիրառվել:

Կենտրոնական ջեռուցման բացակայության պատճառով, հանրակացարանները ջեռուցվում են էլեկտրական սալիկներով, ինչը բավարար ջեռուցում ապահովելու հետ կապված խնդիրներ այնուամենայնիվ առաջացնում է:

Զրամատակարման հետ կապված խնդիրներ առաջանում են կապված ջրագծերի հաճախակի վնասման, ինչպես նաև ջրամատակարման սեզոնային նվազեցումներով: Զուգարանները գտնվում են հակասանիտարական վիճակում:

Հիմնարկում գործում է քարտաֆոնային երկու հեռախոս, սակայն դրանց սպասարկումն անբավարար լինելու պատճառով, հաճախակի դառնում են անսարք:

Հիմնարկում կա մեկ բաղնիք՝ 12 ցնցուղով: Դատապարտյալների նման քանակի պայմաններում, կարծում ենք, որ մեկ բաղնիքը բավարար համարվել չի կարող թեկուզ և դատապարտյալները պնդում են, որ հնարավորություն ունեն և շաբաթվա ընթացքում մեկ անգամ լոգանք ընդունելու:

Բժշկական լրակազմը համալրված չէ, 2 հաստիք խնդիր անդամների այցելության ամսվա դրությամբ եղել են թափուր: Բժշկական սարքավորումները հնացած են և կարիք կա դրանց թարմացման:

2006թ. արձանագրվել է, որ սննդամբերքը/կարտոֆիլ, կաղամբ, գազար, բազուկ/ձմռան ամիսներին պահպում են բաց լուսամուտներով պահեստարանում, որի արդյունքում դրանք ցրտահարվում և դառնում են սննդի համար ոչ պիտանի: 2007թ. դեկտեմբեր ամսին կատարված այցի ժամանակ նման հանգանանք չի արձանագրվել:

Հիմնարկում չլուծված խնդիր է մնում դատապարտյալներին աշխատանքով պահովելու հարցը:

**Առաջարկվում է՝**

1. Նախատեսել կենտրոնացված ջեռուցման համակարգի կառուցում և շահագործում,
2. թարմացնել ջրամատակարման խողովակաշարերը՝ հաճախակի կրկնվող տեխնիկական վթարները բացառելու նպատակով,
3. ուղիներ գտնել ամառային սեզոնում մատակարվող ջրի նվազեցումը կանխելու համար,
4. ձեռնարկել և իրականացնել զուգարանների սանիտարական վիճակի ապահովումը,
5. համալրել բուժաշխատողների հաստիքները և թարմացնել անհրաժեշտ բուժարքավորումները,
6. դատապարտյալների նկատմամբ նշանակվող տույժերի, պատժախուց տեղափոխման և այլ պատաժատեսակների վերաբերյալ կատարվող գրառումները դարձնել լիարժեք և

հասկանալի այն հաշվով, որպեսզի հնարավոր լինի համադրել խախտման և կիրառված տույժի համաչափությունը:

## «Երեքունի» քրեակատարողական հիմնարկ

«Երեքունի» քԿՀ-ն նախատեսված է կիսաբաց և բաց ռեժիմով պատիժը կրող դատապարտյալների համար՝ համապատասխանաբար 371 և 20 դատապարտյալների:

Ընդհանուր առմանք պահման պայմանները համապատասխանում են պահանջվող չափանիշներին, սակայն խնդիրներ կան կապված ջրամատակարման, ջեռուցման, բուժսարքավորումների նորացման հետ:

Ջրամատակարումն ապահովվում է միայն առավոտյան 3 ժամ տևողությամբ, բաց խողովակաշարերի առկայության պատճառով ձմռանը հաճախակի են լինում խափանումները:

Չկա կենտրոնական ջեռուցման համակարգ: Բուժսարքավորումները հնացած են, կարիք ունեն նորացման և համալրման:

Արձանագվել են նաև հանրակացարանների գերծանաբեռնվածության դեպքեր՝ յուրաքանչյուր դատապարտյալին 4քմ. բնակելի տարածքից ոչ պակաս բնակելի տարածքով ապահովելու պահանջի անտեսում:

Առաջարկվում է.

1. Սիցոցներ ձեռք առնել ջրամատակարումը շրջօրյա դարձնելու, ջեռուցման ընդհանուր համակարգ կառուցելու ուղղություններով:
2. Բուժսապատճենը պատշաճ մակարդակի բարձրացնելու նպատակով, նորացնել և համալրել հիվանդանոցի բուժսարքավորումները:
3. Բացառել հանրակացարաններում սանիտարական նորմերը գերազանցող թվով դատապարտյալներ տեղավորելը:

## «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկը նախատեսված է կին և անչափահաս կալանավորներին ու դատապարտյալներին պահելու համար: Այդ տեսակետից, նկատի ունենալով այս կատեգորիայի անձանց նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկությունները, Դիտորդական խումբն այս հիմնարկությունը մշտապես պահել է ուշադրության կենտրոնում:

Ինչպես և նշվել է նախորդ հաշվետվություններում, այս հիմնարկի շինությունը ենթակա է հիմնովին վերակառուցման, վերականգնողական աշխատանքները քիչ արդյունավետ են՝ չի հաղթահարվում խոնավությունը, մասնակի վերանորոգումները չեն կարող ապահովել պահանջվող պայմանները:

Ասվածը վերաբերում է հատկապես կալանավորված կանանց մասնաշենքին, որը գտնվում է վթարային վիճակում:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանը խոնավության բարձր տոկոսայնության պատճառով չի կարող համարվել բնակելի: Խցերում նեղվածք է, լուսամուտներն ամրացված են երկշերտ մետաղաձողերով, ինչն անհնար է դարձնում

լուսամուտների փեղկերի բացելը, հետևաբար և խցերը չեն օդափոխվում: Ամառային ամիսների համար ելք է համարվել լուսամուտների ապակիները համելը:

Խցերում հնարավոր չեն սանիտարական վիճակը հասցնել պատշաճ մակարդակի՝ խցում տարածվում է զուգարանից եկող հոտը: Բացի դա, ջրամատակարման համակարգը չափազանց հնամաշ է և հաճախակի կրկնվող վթարների պատճառով խցերը զրկվում են ջրից:

Դիմնարկն ունի ընդամենը մեկ գրոսահրապարակ, որն օգտագործվում է կանանց և անչափահաների համար: Նկատի ունենալով, որ նրանք ունեն օրական ոչ պակաս երկու ժամյա բացօյքա գրոսամքի իրավունք, այդ մեկ իրապարակը բավարար համարվել չի կարող:

Նկուղային հարկի խցերը չօգտագործելու պատճառով մյուս հարկերի խցերում ավելացել են դատապարտյալների քանակը, որի արդյունքում մեկ դատապարտյալին ընկնող բնակելի տարածքը դարձել է պահանջվող նվազագույնից պակաս:

**Վերոհիշյալ թերությունները մեկուսարանի նոր շենքում (նախկին դպրոցի շենքում) վերացվել են: Ներկա պայմանները բավարարում են ընդունված ստանդարտներին: Նոր մեկուսարարանն ունի չորս գրոսահրապարակ նախկին մեկի փոխարեն:**

Երկարաժամկետ տեսակցության սենյակ չի նախատեսված, իսկ կարճատև տեսակցության սենյակը պատշաճ չի կահավորված, նաև չի ջեռուցվում: Տեսակցության սենյակին կից չկա զուգարան:

Չկա ջեռուցման համակարգ, խցերի տաքացումն իրականացվում է էլեկտրական սալիկների միջոցով, դատապարտյալ կանանց խցերում վառարաններ են դրված: Գիշերային ժամերին էլեկտրականությունն անջատվում է, հանգցվում են նաև վառարանները, ինչի հետևանքով գիշերային ժամերին խցերում պատշաճ ջերմաստիճան չի ապահովվում:

Կանայք հնարավորություն ունեն շաբաթական մեկ անգամ բաղնիքում լոգանք ընդունել: Մեկից ավելի անգամ բաղնիքից օգտվելու հնարավորություն կանանց համար չի ապահովված:

Անչափահաս դատապարտյալների պահման մասնաշենքում վիճակը համեմատաբար բարվոք է, սակայն խնդիր կա դարձյալ կապված ջեռուցման և ջրամատակարման հետ:

Դանձնութիւն համար սենյակ նախատեսված չէ, հանձնութիւն ժամանակին և անարգել ընդունումը չի ապահովված՝ հանձնութ թերողները հարկադրած են լինում տևական ժամանակ սպասել դրսում, որտեղ սպասման համար նստարաններ չեն տեղադրված:

(Այժմ տեսակցությունների սենյակը վերակառուցման ընթացքի մեջ է):

Անչափահաս դատապարտյալներն իրենց ուժերով կազմակերպում և անց են կացնում մշակույթային միջոցառումներ:

2002 թվականից սկսած՝ «ՏՐՏՈՒ» մշակութային հասարակական կազմակերպությունը եւ այլ հասարակական կազմակերպություններ, կրթամշակութային ընդարձակ ծրագիր են իրականացնում անչափահաների եւ կանանց համար: ՔԿՀ-ում այդ 6 տարիների ընթացքում գործել են գեղանկարչության, կերամիկայի, փայտի գեղարվեստական փորագրության, թատրոնի, երգի-պարի, համակարգչային եւ այլ խմբեր, հրատարակվել է ամսաթերթ:

Անչափահաս դատապարտյալների մասնաշենքում քարտային հեռախոս է տեղադրված: Նախկինում հեռախոսային խոսակցությունից օգտվելու համար նրանք տարվում էին կալանավորվածների պահման մասնաշենք, ինչն առաջացնում էր զգալի անհարմարություններ:

## Առաջարկություններ՝

- Նկատի ունենալով, որ կալանավոր կանանց այլ մասնաշենք տեղափոխելու հարցը կարող է ձգձգվել, հարկ կա օգտագործվող մասնաշենքի խցերում մեկուսացնել զուգարանները, փոխել զուգարանակոնքերը և ջրատար խողովակները, կտրել և հանել լուսամուտների դրսի կողմից եղած ճաղավանդակները, խցերն ապահովել շուրջօրյա էլեկտրամատակարնամբ, խցերում տեղադրել հանդերձապահարաններ,
  - նախատեսել և կահավորել երկարատև տեսակցության սենյակ, իսկ կարճատև տեսակցության սենյակն ապահովել պատշաճ կահավորմամբ և չեռուցմամբ, տեսակցության սենյակների հարեանությամբ նախատեսել և ապահովել գործող զուգարան,
  - պատշաճ մակարդակ ապահովել հանձնուքների ընդունման համար այն հաշվով, որ հանձնուք բերողները հարկադրված չլինեն սպասել: Նախատեսել նաև սպասման առանձին տեղ ծածկված և պատշաճ շերմաստիճան ապահովող տարածքում:
  - նախատեսել և պատրաստել 2-րդ զրոսահրապարակը,
  - Դիտորդական խումբը խրախուսում է «ՏՐՏՈՒ» հասարակական կազմակերպության կողմից «Արովյան» քրեակատարողական հիմնարկում մշակութային ծրագրերի իրականացումը եւ նշում դրանց կարեւորությունը: Քրեակատարողական ոլորտի բարեփոխումների առհավատչյան հանդիսացող այս անհախաղեա ծրագիրը դաստիարակչական մեծ ներուժ ունի:
- Կարծում ենք, նախարարությունը պետք է աջակցի «ՏՐՏՈՒ» մշակութային հկ-ին՝ կրթամշակութային ծրագրերի իրականացման համար պատշաճ շենքային պայմաններ ապահովելու, ինչպես նաև ազատազրկված կանանց մշակութային ծրագրերին ակտիվորեն մասնակցելու հնարավորության ընձեռնման հարցերում:

## «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը կենտրոնական տեղ է զբաղեցնում Յայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկների շարքում այն առումով, որ այն կալանավորների պահման հանրապետության կենտրոնական վայրն է, միաժամանակ այստեղից են կատարվում դատապարտյալների բախչումներն ըստ քրեակատարողական հիմնարկների: Այստեղ պահվում են նաև տղամարդ ցմահ ազատազրկման դատապարտվածները:

Այս հիմնարկում զգալի աշխատանք է կատարվել խցերի գերբնակեցվածության պակասեցման, բնական լույսի ներթափանցումն ապահովելու, զուգարանների մեկուսացման և դրա հետ կապված անհրաժեշտ սանիտարական վիճակի ապահովման, խցերի ընդհանուր վերանորոգման, խմելու և տեխնիկական ջրով ապահովելու, խցերի ներքին հարդարանքի ուղղություններով:

Կատարված աշխատանքների, ձեռնարկված միջոցառումների արդյունքում խցերում ապահովված է յուրաքանչյուր անձին հասանելիք նվազազգույն 4 քմ բնակելի տարածք, հասուլ ուշադրություն է դարձվում խցերում սանիտարական վիճակի պահպանմանը:

Պայմաններ ստեղծված են կալանավորների և դատապարտյալների կողմից անձնական հիգիենան պահպանելու համար՝ սպիտակեղենը փոխվում կամ լվացվում է շաբաթական մեկ անգամ, դատապարտյալները հնարավորություն ունեն սպիտակեղենը լվանալու կամ լվացման

հանձնելու լվացքատում: Կալանավորների, դատապարտյալների հիմնական մասն օգտագործում է տանից ստացված սպիտակեղենը:

Յուրաքանչյուր բաժանմունք ունի իր բաղնիքը և ապահովված է շաբաթական մեկ անգամ լոգանք ընդունելու հնարավորությունը:

Կապն արտարին աշխարհի հետ ապահովված է՝ յուրաքանչյուր բաժանմունքում տեղադրված քարտաֆոնային հեռախոսով, պարբերական տեսակցությունների տրամադրմամբ և խցերում ռադիոյի առկայությամբ: Մի շարք խցերում կա նաև հեռուստացույց, որոնք ձեռք են բերվել կալանավորների, դատապարտյալների միջոցներով:

Եթե 2005-2006 թվականներին արձանագրվել են կալանավորների, դատապարտյալների նկատմամբ անձնակազմի կողմից բռնություն կիրառելու, ինչպես նաև լրագրողների հետ հանդիպման արգելքի, ուղարկվող նամակները հասցեատերներին չհասնելու դեպքեր, ապա 2007 թվականին նման դեպքեր չեն արձանագրվել:

2007թ. աշխատանքներ են իրականացվել տեսակցության և քբնչական սենյակների վերակառուցման և վերանորոգման ուղղություններով, որի արդյունքում զգալիորեն բարելավվել է այդ բնագավառը:

2006 թվականին արձանագրվել է, որ չի ապահովված կալանավորների օրական մեկ ժամյա բացօյյա գրոսանքի տրամադրումը: Վարչակազմը դա պատճառաբանել է անձնակազմի սակավությամբ: 2007 թվականին նման երևոյթ չի արձանագրվել, սակայն գրոսահրապարակներում սպորտով գրաղվելու հնարավորություն դեռևս չի ապահովված:

Նախկինում արձանագրվել է և կրկին առկա է այն փաստը, որ կարանտինային խցերում պահկող կալանավորներին սպիտակեղեն չի տրվում, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ կալանվորները սպիտկեղեն ստանում են ոչ թե հիմնարկից:

Կատարված դիտարկումները բերել են այն համոզման, որ հիմնարկում պահկող դատապարտյալների և կալանավորների կենցաղային կարիքները հիմնականում բավարարվում են նրանց հարազատների հաշվին, ինչը նպաստում է ոչ միայն բնակչության մի որոշակի մասի ծայրահեղ աղքատացմանը, այլև հենց հիմնարկում ստեղծում է սոցիալական անհավասարություն, տեղիք է տրվում կոռուպցիային և հովանավորչությանը, որի անմիջական ուղեկիցն է խտրական վերաբերմունքը:

## Առաջարկվում է՝

1. Կարանտինում պահկող կալանավորներին ապահովել սպիտակեղենով,
2. կալանավորներին, դատապարտյալներին տրամադրել անկողնային և կենցաղային պարագաներ այնպիսի վիճակով, որ նրանք հարկադրված չլինեն հրաժարվել դրանք օգտագործելուց և պահանջեն իրենց հարազատներից,
3. ապահովել գրոսահրապարակներում սպորտային խաղերով գրաղվելու հնարավորություններ,
4. մշտապես ուշադրության կենտրոնում պահել նամակագրության իրավունքի հրականացման խնդիրները՝ այդ բնագավառում հնարավոր խախտումները բացառելու նպատակով:

## **«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ**

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկը նախատեսված է հանցանք կատարած իրավապահ մարմինների աշխատողների և գինծառայողների համար որպես կալանավորների և դատապարտյալների պահնան վայր:

Ինչպես և նշվել է նախորդ գեկույցներում, այստեղ զգալի աշխատանքներ կատարվել են հիմնարկը և լրակազմի պահնան պայմանները միջազգային չափանիշներին համապատասխան դարձնելու ուղղությամբ, որի արդյունքում այն կարող է հանրապետության քրեակատարողական հիմնարկների շարքում համարվել օրինակելի:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2007 թվականին, պաման պայմանների և անձնակազմի վերաբերմունքի վերաբերյալ կալանավորներից և դատապարտյալներից բողոքներ չեն ստացվել, նման բողոքներ չեն ներկայացվել նաև խմբի անդամների այցելությունների ընթացքում:

Այդ ամենին զուգահեռ, արձանագրություն է, որ շուրջօրյա ջրամատակարում չի ապահովված, իսկ երկու տեղանոց խցերը ջուր չեն ստանում թեկուզ առկա են ջրի ծորակներ նշված խցերում:

Առաջարկվում է՝

Լուծել ջրամատակարարման խնդիրը:

## **«Գյումրի» քրեակատարողական հիմնարկ**

«Գյումրի» քրեակատարողական հիմնարկի հետ կապված խնդիրները պայմանավորված են այն վերանորոգելու, վերակառուցելու անհեռանկար լինելու հանգամանքով:

Շինությունը կառուցված է ջրային շերտեր պարունակող տարածքի վրա, որի պատճառով խոնավության բարձր տոկոսը բացառել հնարավոր չէ: Նախատեսված է հիմնարկը տեղափոխել «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի տարածքում նոր կառուցված մասնաշենք և այն պետք է իրականացվեր մինչև 2007թ. նոյեմբեր ամիսը, սակայն հետաձգվել է տեխնիկական պատճառներով:

Նկատի ունենալով հեռանկարում հիմնարկի տեղափոխման հանգամանքը, այստեղ վերակառուցումներն ու վերանորոգումները կրել են մասնակի բնույթ՝ վերանորոգվել են միայն ծայրահեղ անմիտիքար վիճակում գտնվող խցերը, վերանորոգվել է բաղնիքը, վերականգնվել են կոյուղագծերը: Փաստորեն արվել է միայն այն, ինչն արգելանքի տակ պահելու պայմանները դարձնում է տանելի, սակայն բավարար չեն կարող համարվել նրանց իրավունքների և ազատությունների լիարժեք պաշտպանության համար:

Ներկայումս «Գյումրի» քԿՀ-ն ամբողջությամբ տեղափոխվել է «Արթիկ» քԿՀ-ի վերանորոգված մասնաշենք:

## **«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ**

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկը եղել է կալանավորված և ազատազրկման դատապարտված անձանց պահման համար առավել անբարենպաստ շենքային պայմաններ ունեցող հիմնարկներից մեկը, ինչի մասին ասվել է խմբի նախորդ գեկույցներում:

2007թ. սկզբին հիմնարկը տեղափոխվել է նոր շենք, որի կառուցումն սկսվել է 2005 թվականին: Այն կառուցված է նման կառույցների համար Եվրախորհրդի պահանջներին լիովին համապատասխան և առկա են կալանավորված և ազատազրկման դատապարտված անձանց պահելու համար միջազգային չափորոշիչներով նախատեսված բոլոր պայմանները: Օրինակ, բոլոր խցերն ունեն բավարար բնական լուսավորվածություն և օդափոխություն, հատակը տախտականած է, կահավորանքը համապատասխանում է օրենքով ներկայացված պահանջներին, սանիտարական հանգույցն առանձնացված է բնակելի տարածքից և այլն:

Հիմնարկի վարչակազմը ոգևորված է ստեղծված պայմաններից և պատրաստակամ է այն դարձնելու իր տեսակի մեջ բացառիկ և օրինակելի: Դրա համար կան բոլոր արտաքին պայմանները, մնացածը պայմանավորվում է անձնակազմի պատրաստվածության մակարդակով:

Խմբի անդամները նորացված հիմնարկում պահպող կալանավորված և ազատազրկման դատապարտված անձանցից դժգոհություններ պահման պայմանների, սննդի և բուժսպասարկման որակի, անձնակազմի վերաբերմունքի վերաբերյալ գրավոր կամ բանավոր որևէ բողոք չեն ստացել:

Հիմնարկի ղեկավարությունն անհանգստացած է հաստիքների, հատկապես բուժաշխատողների հաստիքների համալրված չլինելուց, ինչն արդյունք է տվյալ հաստիքների համար նախատեսված դրամական բավարարման ցածր լինելը:

Խումբը գտնում է, որ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի պայմանները տեսանելի են դարձնում հեռանկարում բոլոր քրեակատարողական հիմնարկներում կատարվելիք անհրաժեշտ վերակառուցումներն ու վերափոխումները:

## **«Մեղրի» Քրեակատարողական հիմնարկ**

«Մեղրի» քրեակատարողական հիմնարկը Հանրապետությունում միակն է, որտեղ բացի բացի ռեժիմով պատիժը կրող դատապարտյալներից, այլ ռեժիմի դատապարտյալներ, այդ թվում նաև կալանավորվածներ, չեն պահպում:

Դատապարտյալներն ապրում են հանրակացարաններում, որոնք տեղավորված են խարխուլ շինություններում, ապահովված չեն խմելու և տեխնիկական ջրամատակարմանք, չկա կոյութի, սանիտարական պայմաններն անտանելի են, ջուրը բերվում է այլ վայրից: Հանրակացարանները ձմռան ամիսներին տաքացվում են էլեկտրական սալիկներով և վառարաններով:

Դատապարտյալներն օգտվում են մոտակա գյուղի բաղնիքից, ինչը հաճախակի նաև անհնարին է՝ բաղնիքի չգործելու կամ ծանրաբեռնված լինելու պատճառով:

Այսպիսի պայմաններն անհնար են դարձնում իրենց ընտանիքների հետ հիմնարկության տարածքում համատեղ ապրելն այն դատապարտյալների համար, որոնք նման ցանկություն ունեն:

Դատապարտյալները հայտնում են, որ իրենք պատրաստ են իրենց ուժերով վերանորոգել, նաև վերակառուցել հանրակացարանները, ջրագիծ անցկացնել, կառուցել բաղնիք և լվացքատուն կամ հենց հանրակացարանի ներսում ապահովել լողանալու պայմաններ, անհրաժեշտ է միայն, որ հիմնարկի դեկավարությունն աջակցի շինանյութերի ձեռք բերման, աշխատանքների կազմակերպման հարցերում:

Նման նախաձեռնություն վարչակազմը երբեւ չի ցուցաբերել:

Դատապարտյալները կայուն աշխատանքով չեն ապահովված, ամռան ամիսներին միայն ներգրավվում են բերքահավաքին: Յիմնարկի պետք չներկայացրեց որևէ կազմակերպության հետ կնքված հանձնարության կատարման կամ աշխատանքային պայմանագիր:

2007թ. դեկտեմբեր ամսին խնճի անդամների հիմնարկ կատարած այցի օրը 31 դատապարտյալից հիմնարկում ներկա էին միայն 10-ը, ըստ հիմնարկի պետի, նոյեմբերի 31-ից 13 դատապարտյալ գտնվում են նեկամսյա արձակուրդում, 8 դատապարտյալի վերաբերյալ որևէ տեղեկություն չկարողացավ հայտնել:

### Առաջարկվում է՝

1. Դատապարտյալների կացարանները դարձնել բնակության համար պիտանի՝ ապահովված խմելու և տեխնիկական ջրով, սանհանգույցով և լոգարանով, այն հաշվով, որ դատապարտյալը հնարավորություն ունենա ապրել նաև իր ընտանիքի հետ:
2. Քննարկել հիմնարկի համար ընդհանուր բաղնիք և լվացքատուն կառուցելու նպատակահարմարության հարցը:
3. Միջոցներ ձեռք առնել դատապարտյալներին մշտական աշխատանքով ապահովելու ուղղությամբ:
4. Պարզել դատապարտյալների բացակայության իրավական հիմքերը:

## «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ

2007թ.-ի ընթացքում “Դատապարտյալների հիվանդանոց” քԿՀ 6 այցելություն է եղել, որից 2-ը պլանային, 4-ը՝ ահազանգերի հիման վրա:

Այցելությունների օրերին քրեակատարողական հիմնարկում դատապարտյալ հիվանդների թիվը տատանվել է 162-179:

Յիմնարկը բախկացած է վիրաբուժական, ընդհանուր թերապիայի, հոգեբուժական, ինֆեկցիոն, նարկոլոգիական, տուբերկուլիոզային և ՄիԱՎ/ԶԻԱՎ բաժանմունքներից:

Վիրաբուժական բաժանմունքում կատարվում են տարաբնույթ և տարբեր աստիճանի վիրահատություններ, հիմնականում վիրահատական միջամտության շնորհիվ դատապարտյալների և կալանավորված անձանց ստամոքսից դուրս են բերվում տարբեր մետաղյա գործիքներ և իրեր:

Վիրահատարանի ընդհանուր վիճակը գնահատվում է բավարար: Տուբերկուլիոզային բաժանմունքում, լաբորատոր սենյակները գնտվում են մաքուր սանիտարական վիճակում, տեղի մասնագետների խոսքերով, կա տարբեր սարքավորումների համարման և լաբորատոր փորձանյութերի կարիք: Խույնը չի կարելի ասել ընդհանուր թերապիայի բաժանմունքի և կարանտինային մասի սենյակների մասին:

Հիմնարկի խոհանոցը սպասարկում է բոլոր բաժանմունքները, բացառությամբ տուրերկուլիոզային բաժանմունքը: Այն բախկացած է պատրաստման տեղամասից, իացի պահպանման սենյակից և երկու հանգստի սենյակներից: Հիմնարկում ճաշը տրվում է դատապարտյալների սենյակներում:

2007թ.-ի տվյալներով հիմնարկում ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի դեմ բուժում են ստանում 11 դատապարտյալ:

Տուբ. բաժանմունքում բուժում են ստանում 43 դատապարտյալ, որոնցից 10-ը Դեղորայքակայուն են /ՄՊԻԱՌ/, 30-ը՝ ԲԿ դրական, 3-ը հատուկ դեղորայք են ստանում /ԴՈՏՍ/ ծրագրով:

2007 թվականին, համաձայն կառավարության Ն-825 որոշման, ծանր հիվանդությամբ տառապող դատապարտյալներից 4-ին ներկայացրել են պայմանական վաղաժամկետ ազատման, որից երկուսը ազատվել են, իսկ երկուսն էլ մահացել են՝ մեկը ստորին վերջույթների ամպուտացիա, մյուսը՝ սրտամկանի կրկնակի հնֆարկտ, 3-րդ աստիճանի հիպերտոնիա:

Մասնագետների խոսքերով, ավելացել է հոգեկան հիվանդություններով տառապող դատապարտյալների քանակը:

Քրեկատարողական հիմնարկում չկա պատժախուց, դատապարտյալները կատարած խախտումների համար տեղափոխվում են “Նուբարաշեն” քԿՅ:

Հիմնարկը ունի որոշ մասնագետների համար ազատություն:

Հեռախոսները թվով երեքն են, նախատեսնվում է 4-րդը տեղադրել տուրերկուլիոզի բաժանմունքում: Մինչ այժմ անհրաժեշտության դեպքում, նրանք օգտվում են ընդհանուր հեռախոսներից:

Դիտողդական խումբը ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ “Դատապարտյալների հիվանդանոց” քԿՅ-ում համաձայն ՀՀ կառավարության որոշման որոշ ծառայողներ, որպես ռիսկային թիրած խումբ հանդիսացող դատապարտյալների հետ շփողներ ստանում են հավելավճարներ: Սակայն նշված հավելավճարների ստացողների ցանկում չկան այնպիսի ծառայողներ որոնք նույնպես անմիջական շփման մեջ են ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ով և տուրերկուլոզով հիվանդների հետ, օրինակ՝ հիմնարկի ատամնաբուժը ընդգրկված չէ այդ ցուցակում:

### Առաջարկվում է՝

1. Հիմնարկում նախատեսել ցմահ դատապարտյալների համար խցեր:
2. Տեղում լուծել պատժախցերի հարցը:
3. Տուբերկուլիոզի բաժանմունքում տեղադրել հեռախոսախցիկ:
4. Հավելավճարների վճարում հիվանդների հետ անմիջական շփում ունեցող բոլոր ծառայողներին:

## «Երևան-կենտրոն» քրեակատարողական հիմնարկ

«Երևան-կենտրոն» քԿՅ-ի մասին նախորդ հաշվետվություններում մանրամասն անդրադարձ եղել է, սակայն խումբը կրկին հարկ է համարում անդրադառնալ այն հանգամանքին, որ հիմնարկը գտնվում է Ազգային անվտանգության ծառայության շենքում և կրում է այդ ծառայության ազդեցությունը: Այստեղ պահվող կալանավորները և դատապարտյալները չեն կարող երաշխավորված լինել, որ չեն գաղտնալսվում իրենց հեռախոսային խոսակցությունները, պաշտպանի և այլ անձանց հետ հանդիպումները, չեն

ընթերցվում իրենց գրագրությունները, գաղտնի տվյալներ չեն հավաքվում իրենց անձնական կյանքի մասին:

Այստեղ դեռևս չի տեղադրված քարտային հեռախոս, ըստ հիմնարկի պետի պնդման, ինքը պարբերաբար կալանավորներին և դատապարտյալներին թույլ է տալիս օգտվելու իր ծառայողական հեռախոսից:

Ընթացիկ տարուն արձանագրվել է դեպք, երբ հիմնարկում անձն ընդունվել և պահվել է առանց դատարանի կողմից կալանքի որոշման և նույնիսկ ձերբակալման մասին որոշում չի եղել: Նման դեպքեր արձանագրվել են նաև նախորդ տարիներին: Սա նշանակում է, որ այս հիմնարկը հաճախակի օգտագործվում է նաև այս կամ այն անձին արգելանքի տակ ապօրինի պահելու նպատակներով:

Դիտորդական խմբի ահազանգերից հետո ԱԱ ծառայության շենքում առանձին կառուցվել է ձերբակալված անձանց պահման վայր, որը խմբի վերահսկողությունից դուրս է:

Առաջարկվում է՝

1. Հիմնարկը դուրս բերել ԱԱ ծառայության շենքից և բացառել հիմնարկի ներքին կյանքին և գործունեությանը այդ ծառայության միջամտությունը:
2. Բացառել առանց կալանավորման մասին դատարանի որոշման կամ առանց դատավճռի հիմնարկություն անձանց ընդունելու արատավոր պրակտիկան:

## Պայմանական վաղաժամկետ ազատման խնդիրներ

Եվրախորհրդի նախարարների կոմիտեի «Կալանավայրերի ծանրաբեռնվածության և կալանավորների թվի չափից դուրս ավելացման մասին» 30.09.1999թ. թիվ /99/ 22 հանձնարականով դատապարտյալների պայմանական վաղաժամկետ ազատումը գնահատված է որպես առավել արդյունավետ միջոց ոչ միայն կալանավայրերի բեռնաթափման համար, այլև խոշոր ներդրում ազատազրկման դատապարտվածին հասարակական կյանքին ներգրավելու գործընթացին:

Հանձնարարականը կարևորում է նաև՝ պայմանական-վաղաժամկետ ազատման պրակտիկան լայնորեն կիրառելով հանդերձ, հասարակական կյանքում իրավախախտին օգնություն և աջակցություն ցուցաբերելու պայմանների ստեղծումը, չնոռանալով նրա նկատմամբ հսկողության իրականացումն այն հաշվով, որպեսզի դատական և վարչական մարմինները պայմանական-վաղաժամկետ ազատումն ընկալեն որպես ընդունելի և պատասխանատու մոտեցում:

Քայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրքը նախատեսել է դատապարտյալին պայմանական-վաղակետ ազատման հնարավորություն, եթե դատարանը կգտնի, որ տվյալ դատապարտյալն ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիքը չունի՝

պատիժը կրելու ժամանակաընթացքում իր վարքագծով ապացուցել է ուղղված և վերադաստիարակված լինելը /հոդ.76/:

Օրենսգիրքը նախատեսում է նաև պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հնարավորությունը / հոդ. 77 /:

Օրենսգրքի այս նորմերը բխում են ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածով դատապարտյալի համար ամրագրված իրավունքից՝ «Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 -116 հոդվածները նվիրված են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցը քննարկվում է պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի կողմից և համապատասխան միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում է կայացվում, եթե վարչակազմը գտնում է, որ դատապարտյալը պատժի մնացած մասը կրելու կարիքը չունի:

Համաձայն քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի, դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական-վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցը քննարկվում է պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի կողմից և համապատասխան միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում է կայացվում, եթե վարչակազմը գտնում է, որ դատապարտյալը պատժի մնացած մասը կրելու կարիքը չունի:

Համաձայն Օրենսգրքի 114-րդ, 115-րդ հոդվածներում 13.06.06թ. կատարված փոփխությունների և լրացումների, վարչակազմը նման միջնորդություն է ներկայացնում դատարան, եթե իր նման որոշումը հավանության է արժանանում պատիժը կրելուց պայմանական վաղակետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է Հանրապետության նախագահի հրամանագրով, տալիս է դրական եզրակացություն:

ՀՀ նախագահի 31.07.06թ. թիվ ՆՀ-163-Ն հրամանագրով սահմանվել է անկախ հանձնաժողովների ձևավորման և գործունեության կարգը, ինչպես նաև հանձնաժողովների անհատական կազմները:

ՀՀ նախագահի նշված հրամանագրով ձևավորվել է երեք հանձնաժողով, որոնք և քննարկում են քրեակատարողական հիմնարկների վարչակազմների որոշումները՝ դատապարտյալին պայմանական վաղակետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ: Եթե անկախ հանձնաժողովը հավանություն չի տալիս վարչակազմի որոշմանը, ապա վարչակազմն իրավունք չունի դատարան նման միջնորդություն ներկայացնել:

Անկախ հանձնաժողովի որոշումը բողոքարկման ենթակա չէ բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումն ընդունվել է նախագահի հրամանագրով հաստատված կարգի խախտումով:

Խմբի անդամները բազմաթիվ բողոքներ են ստացել դատապարտյալներից այն մասին, որ անկախ հանձնաժողովը զանգվածաբար մերժում է պայմանական-վաղաժամկետ ազատման մասին վարչակազմների որոշումներին հավանություն տալն առանց բավարար հիմնավորման:

Խմբի կատարած ուսումնասիրությունները հիմք են տալիս գտնելու, որ այդ հարցով կարիք կա խնդիրը կարգավորող իրավական նորմերի վերաբայցման:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, դատապարտյալին պայմանական-վաղաժամկետ ազատման մասին որոշում ընդունելիս, ոեկավարվում է դատապարտյալի հետ աննիջական շփումներով ստացած տպավորություններվ, իսկ անկախ հանձնաժողովը գնահատում է դատապարտյալին վերագրվող հանցագործության բնույթն ու ծանրությունը, նախկինում ունեցած դատվածությունը կամ դատվածությունները: Մերժում ստանում են հատկապես այն դատապարտյալները, որոնք ունեն նախկին դատվածություն, ինչը պայմանական-վաղաժամկետ ազատումը մերժելու օրենքով նախատեսված հիմք չի համարվում:

Անկախ հանձնաժողովն իր որոշումներն ընդունում է քվեարկությամբ՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ և ընդհանրապես իր որոշումը չի հիմնավուրում ու չի պատճառաբանում, վարչակազմը չի կարող իմանալ, թե ինչ հիմքերով է, որ անկախ հանձնաժողովը հավանության չի արժանացրել դատապարտյալին վաղակետ ազատելու միջնորդություն ներկայացնելու մասին իր որոշումը: Դետևաբար, առաջանում է իր որոշումները հիմնավորելուն անկախ հանձնաժողովին օրենքով պարտավորեցնելու խնդիր:

2008թ. փետրվարի 5-ին ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է կայացրել՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասը՝ անկախ հանձնաժողովի որոշումն օրենքին հակասելու դեպքում դատական կարգով բողոքարկելը սահմանափակելու մասով ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6, 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածներին հակասող եւ անվավեր:

Կարևորում ենք նաև այն, որ պայմանական-վաղաժամկետ ազատման միջնորդություն ներկայացնելու մասին վարչակազմերի որոշումները նույնպես հաճախակի բավարար չափով հիմնավորված չեն լինում, ինչը նպաստում է անկախ հանձնաժողովի կողմից դրանց հավանություն չտալուն:

Եկա Մարդու իրավունքների հանձնակատարի Թոմաս Շամմարբերգի 2007թ. հոկտեմբերի 7-11 Հայաստան կատարած փաստահավաք առաքելության հաշվետվության մեջ նույնպես անդրադարձել է Անկախ հանձնաժողովներին նշելով, որ «**Հանձնաժողովը ստեղծվել է 2006թ. նախագահի հրամանագրով և չի կարող դիտվել որպես անկողմնակալ մարմին: Այդ իսկ պատճառով հանձնակատարը առաջարկում է վերանայել պատիժների մեղմացման և վաղաժամկետ ազատման գործընթացները, ինչպես նաև դիտարկել հանձնաժողովի տեղափոխումը դատական մարմին հարակից բոլոր երաշխիքներով »:**

Դատապարտյալների վերադաստիարակման և նրանց հասարակական կյանքի վերադարձնելու գործում հատկապես կարևորելով պատիժը կրելուց պայմանական վաղակետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու սկզբունքների լիաժեք կիրառման անհրաժեշտությունը,

## առաջարկում ենք՝

1. Քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի որոշումները՝ պատիժը կրելուց պայմանական-վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին որոշումներով պարտադիր նշել բոլոր այն հիմքերը, որոնցով վարչակազմը հանգել է նման հետևության:
2. Քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ «վարչակազմի որոշմանը հավանություն չտալու մասին անկախ հանձնաժողովի որոշումը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված»:  
Վարչակազմն իրավունք ունի անկախ հանձնաժողովի որոշումը՝ պատժի կրումից պայմանական-վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու միջնորդություն ներկայացնելու մասին որոշմանը հավանություն չտալու վերաբերյալ բողոքարկել դատարան»:

Օրենքում նման փոփոխությունները և լրացումները կհանգեցնեն նաև ՀՀ նախագահի հրամանագրում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելուն:

## Քրեակատարողական հիմնարկների ծառայողների հետ կապված խնդիրներ

Անազատության պայմաններում պահպող անձանց նկատմամբ հսկողություն իրականացնող պետական ծառայողների կրթական մակարդակով, բարոյական հատկանիշներով է պայմանավորվում նաև նրանց հսկողության տակ գտնվող անձանց իրավունքների և ազատությունների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը:

Քրեակատարողական ծառայողին օրենքով և իրավական այլ ակտերով ներկայացվող պահանջները նպատակ ունեն համապատասխան հաստիքները համալրել անձանցով, որոնք ունեն համապատասխան մասնագիտական կարողություններ: Հաստիքներ ձևավորելիս, եթե պահանջվող կրթության, մասնագիտական ստաժի վերաբերյալ փաստաթղթային տվյալները կարող են բավարար համարվել, ապա թեկնածուի բարոյական և ընդհանրապես մարդկային հատկանիշները դժվար է փաստաթղթավորել:

Այս առումով, երբ արդեն ձևավորված են հաստիքները, չափազանց կարևոր է անձնակազմի հետ տարվող աշխատանքը, որի ընթացքում է, որ պետք է պատկերացում կազմել յուրաքանչյուր ծառայողի բարոյական, մարդկային հատկանիշների մասին: Մեր կարծիքով, դա պետք է լինի քրեակատարողական հիմնարկի ղեկավարության առաջնային խնդիրներից մեկը: Դրա շնորհիվ է, որ հերթական ատեստավորումները չեն լինի ձևական, կնպաստեն որակյալ անձնակազմի ձևավորմանը:

Քրեակատարողական հիմնարկներում անձնակազմի հետ տարվող աշխատանքները չունեն որոշակի և տեսանելի բովանդակություն, այն սահմանափակվում է անձնակազմի հետ պարբերաբար անցկացվող խորհրդակցություններով: Չեն կազմակերպվում սեմինարներ, չեն

անկացվում մասնագիտական դասընթացներ, անձնակազմի վերապտրաստման դրվածքը բոլոր քրեակատարողական հիմնարկներում ցածր մակարդակի է:

Քրեակատարողական հիմնարկների ծառայողները դժգոհ են սոցիալ-կենցաղային պայմաններից՝ ցածր է աշխատավարձը, մեծ թիվ են կազմում բնակարանային խնդիրներ ունեցողները:

Մեր կարծիքով, քրեակատարողական հիմնարկների ծառայողները պետք է դասվեն աշխատանքային ծանր պայմաններում ծառայողների շարքին և կարևորվի նրանց դրամական բավարումը, սոցիալ-կենցաղային պայմանների բարելավումը պատշաճ մակարդակի բարձրացնելը: Դա ոչ նիայն նման ծառայողների, այլ նաև նրանց հսկողության տակ գտնվող անձանց շահերից բխող պահանջ է: Քրեակատարողական ծառայողի ներկա սոցիալական վիճակը հղի է կոռուպցիոն ռիսկերով, իսկ կոռուպցիան մշտապես ուղեկցվում է այլ անձանց իրավունքների և ազատությունների խախտումներով:

Առաջարկվում է՝

1. Քրեակատարողական ծառայողների հետ պարբերաբար դարձնել մարդու իրավունքների և հիմնարար ազատություններին վերաբերող սեմինարներն ու ուսուցողական պարագմունքները բոլոր քրեակատարողական հիմնարկներում:

2. Վերանայել քրեակատարողական ծառայողների դրամական բավարման, նրանց սոցիալ-կենցաղային պայմանները բարելավելուն վերաբերող իրավական ակտերը:

## Ընդհանուր դիտողություններ ըստ իրավունքների

**1. ՈՒՂՂԻՀ ՀԻՄՆԱՐԿ ԾՆԴՈՒՆՎԵԼԻՍ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՈՏՈՎՃԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ, ՄԱՅՐԵՆԻ ԿԱՄ ԻՐԵՆ ՀԱՍԱՄԵԼԻ ԼԵզվով ՄԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏՈՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**

Կալանավորվածը, դատապարտվածը հիմնարկ ընդունվելիս, ենթարկվում է բժշկական գննության և արձանագրվում են արտաքին վնասվածքները: Հատկապես արտաքին մարմնական վնասվածքներ արձանագրվում են կալանքի կապակցությամբ հիմնարկ բերված անձանց մոտ, ինչը կարող է վկայել քրեական հետապնդման մարմնում նրա նկատմամբ բռնություն կիրառված լինելու մասին:

Որպես կանոն, հայտնաբերված մարմնական վճառվածքների կապակցությամբ քննություն չի անցկացվում, բավարար է համարվում կալանավորվածի հայտարությունը՝ վճառվածքը բռնության կիրառման հետ կապ չունենալու մասին:

Դիմնարկի ներքին կանոնակարգի, իրավունքների ու պարտականությունների մասին կալանավորվածը, դատապարտվածը բոլոր հիմնարկներում գրավոր տեղեկացվում է: Խցերում, կացարաններում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ օրենքից քաղվածքներ փակցված են:

Դիտորդական խումբը առաջարկում է, որ յուրաքանչյուր հայտնաբերված մարմնական վճառվածքի կապակցությամբ քԿՅ վարչակազմի կողմից հաղորդում տրվի իրավապահ մարմիններին, որոնք ել կպարզեն նշված վճառվածքների պատճառները: Այս խնդիրը շատ է կարևորվում խնդիր կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դաժան, աննարդկային և պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման հիմնական ճանապարհներից մեկն էլ պատշաճ հետաքրնության անցկացումն է յուրաքանչյուր կասկածելի դեպքով:

## 2. Իր նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի իրավունք

Այս իրավունքը ներառում է նաև դաժան, աննարդկային և պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքը: Այս իրավունքների ապահովման երաշխիքներ են նաև անձնակազմի ուսուցումը և վերապատրաստումը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման ոգով:

Այս իրավունքի խախտման դեպքեր այլ հիմնարկներում, բացի «Արթիկ» քրեակատարողական հիմնարկից, չեն արձանագրվել:

Նախորդ հաշվետվություններում ասված է եղել, որ նման դեպքերի կապակցությամբ ծառայողական քննությունները կատարվում են մակերեսային, ոչ լիարժեք, որի պատճառով մեղավորները համապատասխան պատասխանատվության չեն ենթարկվում: Ավելին՝ դաժան, աննարդկային և պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի համար չպետք է սահմանափակվել ծառայողական քննություններով կամ կարգապահական տույժերով, որովհետև նման վերաբերմունքի դրսնորումները քրեորեն հետապնդելի են:

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկում տեղ գտած բռնությունների և չարաշահումների կապակցությամբ անցկացվել է ծառայողական քննություն: Այն, որ հիմնարկի պետի տեղակալը, որը մեղադրվում է զանգվածաբար բռնություններ կազմակերպելու և իրականացնելու, հանցագործություն համարվող զանգան այլ չարաշահումների մեջ և շարունակում է պաշտոնավարել, ինքնին վկայում է, որ այս դեպքում նույնպես ծառայողական քննությունը չի եղել լիարժեք:

### **3. Իր իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ դիմումներ, բողոքներ ներկայացնելու իրավունք**

Դիմում-բողոքների, առաջարկությունների ներկայացնան օրենսդրական հիմքերը նախատեսված են: Քրեակատարողական հիմնարկներում այդ իրավունքի իրականացումն հիմնականում ապահովվում է: Կալանավորներից և դատապարտյալներից իրենց դիմում-բողոքները հասցեատերերին հասած չլինելու մասին 2007թ. գանգատներ չեն ստացվել բացի «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի վերաբերյալ ստացված գանգատներից: Չնայած դրան, խումբը գտնում է, որ սա դժվար վերահսկելի բնագավառ է, քանի որ կալանավորը, դատապարտյալը կարող է նաև վախենալ ու չգանգատվել:

### **4. Առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու իրավունք**

Անձնական հիգենիայի պահպանումն առողջության պահպանման կարևորագույն նախապայման է: Այդ տեսակետից կարևորվում է խցերի, կացարանների պայմանները, սանիտարական վիճակը, մշտական ջրի առկայությունը:

Եթե խցերի ու կացարանների պայմանները հիմնականում, բացառությամբ առանձին հիմնարկների, համապատասխանում են օրենքով սահմանված չափանիշներին, ապա հիմնարկների մեծ մասը խնդիրներ ունի մշտական ջրով ապահովելու հետ: Բաղնիքները հիմնարկներում ապահովում են լոգանք ընդունելու համար պահանջվող նվազագույնը՝ շաբաթական մեկ անգամ: Մինչդեռ հիգենիայի ապահովումը կարող է լինել ցանկալի մակարդակով, եթե հնարավոր դարձվեր բաղնիքից օգտվել ցանկացած ժամանակ:

Բուժօգնությունը ցածր մակարդակի է բոլոր հիմնարկներում՝ բուժական սարքավորումների բացակայության կամ հնացած լինելու, որակյալ բուժաշխատողներով ապահովված չլինելու և նույնիսկ հաստիքները թափուր լինելու պատճառներով:

Սննդի որակը բարելավելու ուղղությամբ զգալի դրական տեղաշարժ նկատելի է հատկապես հացի որակի բարձրացման հարցում, սակայն ջրիկ ճաշերի որակը հեռու է բավարար լինելուց: Չափաբաժինների վերաբերյալ դժգոհություններ չկան:

## **5. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք**

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն ամրագրված է քրեական դատավարության օրենսգրքով, «Փաստաբանության մասին» Օրենքով:

Փաստաբանական պալատի կազմում գործում է Հանրային պաշտպանի գրասենյակը, որի փաստաբանները կարիքավոր մեղադրյալների պաշտպանությունն իրականացնում են պետության կողմից տրամադրվող միջոցների հաշվին: Կարելի է պնդել, որ դա հավասարապես վերաբերում է նաև դատապարտյալներին, որոնք ցանկանում են վիճարկել իրենց նկատմամբ կայացած դատավճիռը: Սակայն օրենքում այդ հանգամանքը չի հստակեցված քանի որ՝ երբ խոսքը վերաբերում է դատապարտյալներին, ուրեմն կարող է խոսվել ուժի մեջ մտած դատավճիռի մասին, իսկ այն բողոքարկել դատապարտյալը կարող է միայն Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով, իսկ Հանրային պաշտպանի գրասենյակը հավատարմագրված փաստաբաններ չունի:

Կալանավորները և դատապարտյալները դժգոհում են Հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանների մատուցած ծառայությունների մակարդակից: Այդ հարցը քննարկվել է Փաստաբանների պալատում, ակնկալվում է, որ Պալատի կողմից անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն:

## **6. Անձնական անվտանգության իրավունք**

Անձնական անվտանգության ապահովվածությունը կապվում է ոչ միայն քրեակատարողական իիմնարկի անձնակազմի վերաբերմունքի հետ, այլ նաև կարևորվում է խցերի և կացարանների կոմպլեկտավորման սկզբունքները: Միևնույն խցում կամ կացարանում տարբեր անձանց տեղավորելն առանց նրանց համատեղելիությունը հաշվի առնելու, սպառնալիք է այս կամ այն անձի անձնական անվտանգության համար:

Անհամատեղելի անձանց միևնույն խցում կամ կացարանում տեղավորած լինելու վերաբերյալ խումբը գանգատներ չի ստացել, սակայն ընդհանուր տպավորությունն այն է, որ այդ հանգամանքը հաճախ նաև անտեսվում է:

## **7. Սոքի, խղճի և դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության իրավունք**

Այս իրավունքների սահմանափակման դեպքեր չեն եղել, նաև այդ առումով գանգատներ չեն ստացվել:

Դավանանքի ազատության իրավունքի իրականացումն ընդգծվում է հատկապես այն իիմնարկներում, որտեղ կան պահպող «Եհովայի վկաներ» դավանանքի ներկայացուցիչներ:

Նրանք իրենց խցերում, կացարաններում կահավորել են իրենց դավանանքն իրականացնելու համար անկյուններ, վարչակազմերի կողմից որևէ սահմանափակում նրանց նկատմամբ չի կիրառվել:

**8. Արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվակա միջոցներից օգտվելու իրավունք**

Կապն արտաքին աշխարհի հետ հիմնականում ապահովված է օրենքի շրջանակներում՝ խցերում, կացարաններում առկա է ռադիոկապ, շատ խցեր ու կացարաններ կալանավորների, դատապարտյալների միջոցներով ապահովված են հեռուստացույցով, նամակագրությունը թույլատրված է օրենքով նախատեսված սահմանափակումներով, տեսակցություններ տրամադրվում են, հեռախոսակապից կարող են օգտվել ըստ սահմանված գրաֆիկի:

Այս ամենին գուգահեռ, հիմնարկների հիմնական մասում տեսակցության սենյակները պատշաճ չեն կահավորված, չկա ջեռուցում, գրադարաններում եղած գրականությունն աղքատիկ է և չի կարող լիարժեք բավարարել դատապարտյալների պահանջները, հեռախոսակապը բացակայում է «Երևան-կենտրոն» քրեակատարողական հիմնարկում, «Կոշ» քԿՀ-ում աշխատում է խափանումներով, «Աբովյան» քԿՀ-ում դուրս է անչափահաս դատապարտյալների բաժանմունքից:

**9. Քանգստի, ներառյալ՝ բացօյա գրոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի իրավունք**

Քանգստի ժամերն իրենց հայեցողությամբ օգտագործելու իրավունքի սահմանափակումների վերաբերյալ գանգատներ չեն ստացվել, սակայն ցանկալի էր հանգստի ժամերն առավել արդյունավետ, հետաքրքիր և ուսուցողական դարձնել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ անչափահասների համար, մինչդեռ այստեղ ընդամենը մեկ բացօյա գրոսանքի իրապարակ է բոլոր դատապարտյալների համար:

Բոլոր քԿՀ-ներում, բացի «Վանաձոր» քԿՀ-ից, խնդիր կա իրապարակների ընդարձակման, սպորտային հարմարություններով վերագինման:

## **10. Քաղաքացիական գործարքների մասնակցելու իրավունք**

Այս իրավունքների իրականացման հետ կապված խնդիրներ չեն առաջանում: Խնդիրը միայն նրանում է, որ Քրեկատարողական օրենսգիրքը, թույլատրելով կալանավորվածին, դատապարտյալին մասնակցելու քաղաքացիական գործարքներին, չի կարգավորել այն հարցը, թե ինչպես վարվել, երբ դատապրտյալը ցանկանում է դատարանում մասնակցել այն վեճին, որն առաջացել է իր կնքած գործարքի կապակցությամբ: Օրենսգիրքը նրան դատարան ուղեկցելու կամ դատարան ներկայանալու համար արձակելու կարգ չի նախատեսել, չի նախատեսել նաև չթույլատրելու արգելք: Այս կապակցությամբ դատարան ներկայանալ չթույլատրելը դատապարտյալները գնահատում են որպես իրավունքի խախտում:

Հարկ կա այս առունով օրենսդրական հստակեցումների:

## **11. Նմարավոր և օրենքով նախատեսված կրթություն ստանալու, ստեղծագործ աշխատանքով գրադարձնելու իրավունք**

Դատապարտյալների կրթություն ստանալու իրավունքը նախատեսված է Քրեկատարողական օրենսգրքի 89, 90 հոդվածներով, ըստ որի ուղղի հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, հետքուհական մասնագիտական կրթությունը կազմակերպելու համար: Այն պետք է սահմանվի ուղղի հիմնարկի ներքին կանոնակարգով:

Ուղղի հիմնարկների ներքին կանոնակարգով նույնպես կրթության կազմակերպման խնդիրը դրվում է վարչակազմի վրա՝ բարձրագույն և հետքուհական կրթությունը դատապարտյալի հաշվին իրականացնելու պայմանով:

Այդ իրավունքն իրականացնելու կարգն ու պայմանները, որևէ հիմնարկում դատապարտյալները տեղեկացված չեն և չեն օգտվում այդ իրավունքից: Առկա է միայն բացարիկ մեկ դեպք՝ «Նուբարաշեն» քԿՀ-ում ցմահ ազատազրկման դատապարտված մեկ դատապարտյալ հեռակա կարգով ստանում է բարձրագույն մանկավարժական կրթություն:

Նախնական մասնագիտական՝ արհեստագործական կրթություն կազմակերպված է «Աբովյան» քԿՀ-ում անշափահաս դատապարտյալների համար, այլ հիմնարկներում նման կրթության ստացում չի կազմակերպվում:

Ստեղծագործական աշխատանքով գրադարձնելու իրավունքը դատապարտյալների համար չի սահմանափակված, դրանով նրանք կարող են գրադարձնել իրենց ազատ ժամերին:

## **12. Աշխատանքով գրաղվելու իրավունք**

Այս իրավունքը չի թվարկված դատապարտյալի հիմնական իրավունքների շարքում: Քրեկատարողական օրենսգրքի 85-րդ հոդվածով, դատապարտյալին աշխատանքով ապահովելը պայմանավորվում է եղած հնարավորություններով, դատապարտյալին իրավունք է վերապահվում նաև, հիմնարկի ներքին կանոնակարգով սահմանված կարգով, ինքնուրույն իրեն ապահովելու աշխատանքով:

Ընդհանրապես, դատապարտյալների աշխատանք ունենալու իրավունքի իրականացումը մնում է չլուծված խնդիր, ինչը զգալի արգելք է դատապարտյալների վերադաստիարակման և հասարակություն վերադարձնելու նպատակի իրականացման ճանապարհին: Առանձին ուղղիչ հիմնարկներում փոքրաթիվ աշխատուժ օգտագործող արտադրույթունների առկայությունը խնդիրը չի լուծում:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կա կարի արտադրամաս, որը նաև նաև ապահովում է դատապարտյալ կանանց գրաղվածությունը:

Անընդունելի է հատկապես այն, որ բաց ռեժիմի «Մեղրի» քԿՅ-ում դատապարտյալները չեն ապահովված աշխատանքով: Գտնում ենք, որ նման հնարավորություններ այստեղ կան, իրավիճակն արդյունք է հիմնարկի վարչակազմի կողմից այդ հնարավորությունները չօգտագործելու:

### **Պատիժը կատարող հիմնարկի խանութից կամ կրպակից կամ վարչակազմի միջոցով սմունդ կամ առաջին անհրաժեշտության իրեն ծեռք բերելու իրավունք**

Այս իրավունքի իրականացումն ապահովված է բոլոր ուղղիչ հիմնարկներում: Խնդիրը սակայն նրանում է, թե ինչպիսի գներ են սահմանված: Դատապարտյալները գանգատվում են նման խանութներում և կրպակներում սահմանված բարձր գներից: Ինչպես նաև որոշ քԿՅ-ներում այն ապրանքները, որոնք վաճառվում են քԿՅ-ի խանութում չեն կարող գնվել այլ վայրերից և հանձնութների տեսքով բերել քԿՅ:

### **Դրամական փոխանցումներ, հանձնութներ և ծանրոցներ ստանալու և ուղարկելու իրավունք**

Այս իրավունքի իրականացումն ապահովված է բոլոր ուղղիչ հիմնարկներում, սակայն խնդիր կա հանձնութների ընդունման կետերում պատշաճ սանհտարական պայմանների ապահովման, դրանց ընդունման կազմակերպումն այն հաշվով, որ հանձնութ բերողների հերթեր չառաջանա, անհարկի սպասումներ չլինեն: Ուղղիչ հիմնարկների այցելունների համար անհրաժեշտ է տարվա բոլոր եղանակների համար հարմար սպասատեղեր նախատեսել

պարսպապատ տարածքներից դուրս այն հաշվով, որ այցելուն հարկադրված չլինի բաց երկնքի տակ և ոտքի վրա սպասել իր խմբի լուծմանը:

Օրինակ, արձանագրվել է դեպք, երբ «Աբովյան» քԿՀ-ի հանձնութ բերած քաղաքացուին չի դիմացել արևի տակ և ոտքի վրա իր հերթին սպասելուն կորցրել է գիտակցությունը:

## Ընդհանուր բնույթի առաջարկներ

1. Վերանորոգման և վերականգնողական աշխատանքներն ակտիվացնելու միջոցով, բացառել օրենսդրության պահանջներին չհամապատասխանող խցերում, կացարաններում կալանավոր, դատապարտյալ պահելու դեպքերը,
2. արագացնել և լուծել «Աբովյան» քԿՀ-ի կալանավոր կանաց մասնաշենքն այլ մասնաշենք տեղափոխելու, «Մեղրի» քԿՀ-ի կենցաղային պատշաճ պայմաններ ստեղծելու, ինչպես նաև հեռանկարում «Գորիս» քԿՀ-ն այլ վայր տեղափոխելու խնդիրները,
3. Բոլոր ուղղիչ հիմնարկներում միջոցներ ձեռնարկել ջրագծերի վերանորոգման և շուրջօրյա խմելու և տեխնիկական ջրով ապահովելու, ջեռուցման համակարգեր ստեղծելու, բաղնիքներն ընդարձակելու կամ լրացուցիչ բաղնիք կառուցելու խնդիրները,
4. ուղղիչ հիմնարկների խոհանոցներում հատուկ ուշադրություն դարձնել սանիտարական պայմանների և ճաշատեսակների որակի բարձրացմանը,
5. տեսակցության սենյակներն ապահովել անհրաժեշտ կահավորմամբ և ջեռուցմամբ,
6. զբոսահրապարակներն ապահովել մարզական սարքավորումներով,
7. հանձնութի ընդունման կետերին կից նախատեսել և կառուցել տարվա բոլոր եղանակներին հարմար սպասատեղեր,
8. խստացնել հսկողությունը կալանավորների, դատապարտյալների դիմում-բողոքներ ուղարկելու իրավունքի պատշաճ իրականացումն ապահովելու նկատմամբ,
9. անձնակազմի կողմից թույլ տրված իրավախախտման վերաբերյալ ծառայողական քննությունը դարձնել բազմակողմանի և սպառիչ:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ Ա 937  
«23 02 2009» թ.

0078 Երևան, Դալարյան 41/ա, հեռ. 380-389  
Էլ. փոստ [info@moj.am](mailto:info@moj.am)

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և  
մարմիններում հասարակական վերահսկողություն  
իրականացնող հասարակական դիտորդների  
խմբի ծրագրերի ղեկավար՝  
Մ.Բաղդասարյանին

Ի պատասխան Ձեր 2009թվականի հունվարի 20-ի. գրության

Հարգելի պարոն Բաղդասարյան

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության  
քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական  
վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կողմից  
քրեակատարողական հիմնարկներ կատարած այցելությունների հիման վրա կազմված  
2007թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության կապակցությամբ  
հայտնվում է, որ՝

«Գորիս» քրեակատարողական հիմնարկ

քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների ընդհանուր  
թիվը «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմները, ինչպես նաև  
կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի  
տարածքները սահմանելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2008թվականի  
մայիսի 27-ի թիվ 41-Ն հրամանին համապատասխանեցնելու հարցը կարծարծվի  
հրատապ հաշվետվության կապակցությամբ ներկայացվող առաջարկությունում:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկի և Միջազգային Կարմիր Խաչի կողմից հիմնարկի խցերում իրականացվել են կոսմետիկ բնույթի նորոգման աշխատանքներ առանց հիմնական կրող կոնստրուկցիաների ուժեղացմամբ։ Ինչ վերաբերվում է հիմնարկությունն այլ շինություն տեղափոխելու հնարավորությանը, ապա այդ կապակցությամբ 2007թվականից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացվել քրեակատարողական համակարգի ՄԺԾ ծրագրերի հայտեր, որտեղ ընդգրկված է նաև «Գորիս» քրեակատարողական նոր հիմնարկի կառուցման նպատակով տարածքի ձեռքբերման և նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմման համար անհրաժեշտ գումարի հայտը։

Հիմնարկում նախատեսված է հացադրություն հայտարարած կալանավորված, դատապարտված անձանց պահման համար հատուկ սենյակ։

#### **«Արթիկ» քրեակատարողական հիմնարկ**

2007թվականի հուլիսին «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետը, անվտանգության ապահովման քաժնի պետը ազատվել են քրեակատարողական ծառայությունից, իսկ հիմնարկի պետի տեղակալը Ենթարկվել է կարգապահական տույժի և 2007թվականի սեպտեմբերին փոխադրվել է այլ պաշտոնի հիմնարկում տեղ գտած թերությունների համար։ Բոլոր քրեակատարողական հիմնարկների պետերին հանձնարարվել է հատուկ հսկողություն սահմանել դիմում-բողոքներն օրենքով սահմանված կարգով ըստ հասցեատերերի ուղարկումն ապահովելու վերաբերյալ։

2007թվականին իրականացվել է նոր ջրագծերի մոնտաժում և ջրահավաք ավագանի կապիտալ նորոգում, որի սկզբնական շրջանում շահագործման հետ կապված խոչընդոտ էր ավագային շերտի նստվածքը, սակայն որոշ ժամանակ շահագործելուց հետո համակարգն ամբողջությամբ մաքրվել է և ջրի մաքրությունը համապատասխանում է սանիտարական նորմերին։

2007թվականին իրականացվել են «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի նոր վարչական մասնաշենքի գաղամատակարարման և ջեռուցման աշխատանքները։ Բոլոր հանրակացարանային մասնաշենքերը ապահովված են կենտրոնական տար ջրամատակարարման և ջեռուցման համակարգերով։ Համակարգը շահագործվում է 20.12.2007թվականից համապատասխան ծառայությունների հետ պայմանագրեր կնքելուց հետո։ Համակարգը գործում է անխափան։

Զեռնարկում են միջոցներ քժշկական հաստիքների համալրման համար։ Ներկայումս 9 հաստիքներից թափուր են 2.5-ը (այդ թվում՝ 1 գլխավոր, 1 առաջատար մասնագետների և և 0.5 դրույք վարձու քժշկի հաստիքները)։

## **«Աւան» քրեակատարողական հիմնարկ**

«Աւան» քրեակատարողական հիմնարկում նախատեսվում է իրականացնել կապիտալ վերանորոգման աշխատանքներ: ՄԺԾ ծրագրով գումարի առկայության դեպքում կիրականացվեն համապատասխան աշխատանքներ:

Ինչ վերաբերվում է դատապարտյալներին աշխատանքով ապահովելու խնդրին, ապա քրեակատարողական ծառայության համակարգում գործում է «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը, որի կանոնադրության համաձայն հիմնադրամի գործունեության հիմնական նպատակներից է դատապարտյալների աշխատանքային գրադաժության ապահովումը:

Ապահովված է զուգարանների սանիտարական վիճակը:

## **«Կոշ» քրեակատարողական հիմնարկ**

«Կոշ» քրեակատարողական հիմնարկում 2007թվականին իրականացվել է արտատարածքային ջրագծի կապիտալ նորոգում: Հիմնարկը ապահովված է նաև երկրորդ սնուցման աղբյուրով և կուտակային ջրավազանով:

Տարեցտարի ձեռք են բերվում նոր սարքեր-սարքավորումներ: Զեռնարկվում են միջոցներ բժշկական հաստիքների համալրման համար: Ներկայումս 9-ը հաստիքներից թափուր են 5-ը (այդ թվում՝ 1 գլխավոր, 3 երրորդ կարգի մասնագետների և 1 վարձու բժշկի հաստիքները):

## **«Էրերունի» քրեակատարողական հիմնարկ**

Ինչպես «Էրերունի», այնպես էլ «Նուբարաշեն», «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկները և հարակից բազմաբնակարան բնակելի շենքերը և շինությունները սնուցվում են Էրերունի համայնքում կենտրոնացված մեկ ջրավազանից, որի ծավալները ոչ բավարար լինելու պատճառով վերոհիշյալ բոլոր ջրապառողները ջրամատակարարվում են ժամանակային գրաֆիկով:

Տարեցտարի ձեռք են բերվում նոր սարքեր-սարքավորումներ:

## **«Արովյան» քրեակատարողական հիմնարկ**

«Արովյան» քրեակատարողական հիմնարկի կանաց տեղամասի հանրակացարանային մասնաշենքում առանձնացված են լոգասենյակներն ու զուգարանները, որոնք հիմնանորոգված են:

Նախկին մեկուսարանի շենքը այլևս չի գործում, այն տեղափոխվել է նախկին դպրոցի մասնաշենք, որը հիմնովին վերակառուցվել է մեկուսարանի մասնաշենքի: Նոր մասնաշենքն ապահովված է բոլոր կոմունալ - կենցաղային պայմաններով, ունի նաև կենտրոնացված տար ջրամատակարարում և զեռուցման համակարգ: Շենքում առկա է 4 լոգասենյակ, խցերն ապահովված են մեկուսացված և օդափոխվող սանիհանգույցներով: Խցերի լուսավորությունը համապատասխանառ է քաղաքաշինության նորմերին:

Անցակետի վերակառուցմամբ հիմնարկն ապահովվել է երկարատև և կարճատև տեսակցության սենյակներով: Հանձնութիւ սենյակը կապիտալ նորոգվել է, այցելուների համար ստեղծված են բարենպաստ պայմաններ: Մասնաշենքն ապահովված է բոլոր կոմունալ-կենցաղային պայմաններով և ունի կենտրոնացված տաք ջրամատակարում և ջեռուցման համակարգ:

### «Նորարաշեն» քրեակատարողական հիմնարկ

Ինչպես «Նորարաշեն, այնպես էլ մյուս քրեակատարողական հիմնարկներում մշտական հսկողություն է սահմանվել հիմնարկում գործող բաղնիք-լվացքատան աշխատանքների, ինչպես նաև նշված օրյեկտում առաջացած ֆինանսական մեծ ծախսեր չպահանջող թերությունները հիմնարկի աշխատակիցների ուժերով շտկելու նկատմամբ: Կատարվում են անհրաժեշտ աշխատանքներ դատապարտյալներին և կալանավորված անձանց անկողնային պարագաներով ապահովելու, նրանց սանիտարական վիճակի, դատապարտյալներին, կալանավորված անձանց տրվող ճաշերի պատրաստման բազմազանության և որակի ուղղությամբ:

### «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ

Զեռնարկվում են համապատասխան միջոցներ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի բժշկական հաստիքների համալրման համար: Ներկայումս 9 հաստիքներից քափուր են 2.5-ը (այդ քվում՝ 1 գլխավոր, 1 առաջատար մասնագետների և 0.5 դրույք վարձու բժշկի հաստիքները):

### «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ

«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում կատարվում են շինարարական աշխատանքներ և նախատեսվում է ցմահ դատապարտյալների համար խցեր:


ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններ կատարելու կապակցությամբ կմշակվի և կներկայացվի ««Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» նախագիծը:

Քրեակատարողական ծառայողները վերապատրաստվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտում, ինչպես նաև մասնակցում են տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող սեմինարներին և դասընթացներին:

Քրեակատարողական հիմնարկներում պահպող անձանց զննությամբ հայտնաբերված մարմնական վճարածքների մասին հաղորդումները իրավապահ մարմիններին ներկայացնելը կարգավորվում է «Զերբարկալված և կալանավորված

անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածով: Բացի  
այդ քրեակատարողական իիմնարկներին հանձնարարվել է կալանավորված անձին կամ  
դատապարտյալին ընդունելիս նախնական բժշկական զննության ընթացքում  
արձանագրված և համապատասխան մատյանում գրանցված մարմնական  
վնասվածքների կամ վնասվածքների հետքերի վերաբերյալ անհապաղ գրավոր տեղյակ  
պահել ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների  
կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությանը և  
քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Հարզամքով՝



Գ. Դանիելյան